Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտություն (16 դասաժամ), ֆիզիկա (7 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (6 դասաժամ), մաթեմատիկա (28 դասաժամ), ՀԵՊ (5 դասաժամ), տեխնոլոգիա (կիսվող 4 դասաժամ) և դասվարի (18 դասաժամ) թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում/ Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ,
- « Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից ստաժի վերաբերյալ տեղեկանք և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
- ինքնակենսագրություն / Ձև 5/,
- այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են ս/թ նոյեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ս/թ նոյեմբերի 17-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Շիրակի մարզի <<Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, բնակավայր Ախուրյան, Ախուրյան խճ 55:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /077/ 96-53-59 հեռախոսահամարով: